«Հասարակական այս նոր երևույթը ամեն գրավական ունի լայն ծավալ ստանալու. նրա հետևանքները դրական կլինեն թե գրականության և թե հասարակության համար»: Այնուհետև՝ «Ամենախիստ և միակողմանի քննադատությունն անգամ կունենա իր բարերար հետևանքը. նոր սերունդը գիտակցաբար կը լծվի հայ պատմության անիվին, ինչ որ մի կողմից կվերացնի լքումը և տարտամությունը հասարակության կենդանի տարրի միջից, մյուս կողմից վստահություն կներշնչի նորերի զգացումին, մտքին ու կամքին: Գրական այս շարժումը մենք համարում ենք վերածնության սկիզբն և բեկման կետը հայ մտքի և զգացումի պատմության մեջ»:

Անվանի քննադատի այս դիտողությունները մեկ անգամ ևս հաստատում են, որ գրական վերածննդի շարժումը 20-րդ դարասկզբին համազգային մշակույթի փաստ էր: Այս տեսակետից՝ հայ գրականության, ինչպես նաև գրական քննադատության երկու հատվածների շահագրգռվածությունները, պատմականորեն ձևավորված ինչ-ինչ տարբերություններով հանդերձ, իրենց նախադրյալներով ու հեռանկարներով միասնական էին:

Էսայան սանուց միության ջանքերով կազմակերպված Պոլսի այս ասուլիսներին այսօրվա սերունդը ծանոթ է առավելապես գիտական գրականությունից՝ առանց անմիջականորեն շփված լինելու սկզբնաղբյուրների հետ: Այս գիրքը նպատակ ունի լրացնելու այդ բացը:

Ինչ վերաբերում է ներկայացվող առաջաբանին, մեր նպատակը չի եղել ասուլիսներում հնչած բոլոր ելույթների համակողմանի քննությունը, մասնավորապես դրանց բոլոր աղերսների լուսաբանումը ժամանակի եվրոպական գեղագիտական ուղղությունների հետ, առաջադրված տեսակետների քննական վերլուծությունը գեղարվեստական նյութի համադրմամբ և այլն: Այդ ամենը ժողովածուն ընթերցողների, մասնավորապես երիտասարդ գրականագետների խնդիրն է: Համառոտակի ծանոթացնելով ասուլիսների բովանդակությանը՝ փորձել ենք միայն օգնել նրանց իրենց ապագա ուսումնասիրությունների ընթացքում՝ արդեն մերօրյա համաշխարհային գրական մտքի համատեքստում:

ԼԱՐԻՍԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ